

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՅՐԵՐԸ

Ինչո՞ւ է աշունն այսօր թախծոտ Հայաստանում: Ասում են՝ աշունը ամենուր է թախծոտ: Բայց ոչ մի տեղ չեն հանդիպել այսպիսի աշնան, այսպիսի թախիծի, որ թանձրացած լինի մթնոլորտի մեջ, ոչ մի տեղ չեն զգացել, որ թախիծը բույր ունենա: Իսկ Հայաստանում թախիծը բույր ունի, և այդ բույրը մեզ հասնում է ամենուր, ամենուր: Մլլացող խաշամից է թախիծը բուրում: Մի ժամանակ ինձ թվում էր, թե միայն գյուղերի վրա է կախված թախիծի այդ բույրը, ուր մարդիկ կրակի են տալիս իրենց ծառերը մերկացրած խաշամը: Խաշամը դժվար է այրվում, և որպես կանոն կարճ բռնկումից հետո սկսում է մլլալ, և թախիծի բույրով ներկում մթնոլորտը:

Ամեն անգամ, երբ ծառերի տակ խաշամ է հայտնվում, Հայաստանը, ողջ Հայաստանը պատվում է մլլացող խաշամի բույրով, թախիծի բույրով: Հիմա աշուն է, և եթե դուք Հայաստանում եք՝ երեկոյան աղջամուղջին դուրս եկեք պատշգամբ կամ բակ, և ձեր մարմինը կլցվի թախիծի բույրով, մլլացող խաշամի բույրով: Բայց չէ, դա մլլացող խաշամի բույրը չէ, դա թախիծի բույրն է, որ արթնանում է ամեն անգամ, երբ ծառերի տակ խաշամ է հայտնվում: Թե չէ՝ ո՞վ է խաշամ այրում Երևանի կենտրոնում: Կամ գուցե խաշամն ինքը մլլում է աշնանային թախիծից: Մլլացող խաշամը թախիծի բույր ունի:

Մա աշնան բույրն է, Հայաստանի աշնան բույրը:

Հայաստանն ինքը բույր ունի, ավելի ճիշտ՝ բույրեր: Երեք մեծ բույրերի համադրում է Հայաստանը, և փակ աչքերով ու ականջներով աշխարհը շրջելիս կարող ես ասել՝ հասարակ Հայաստան, թե դեռ ոչ: Հայաստանը ճանաչելի կդառնա իր բույրով:

Այդ երեքից մեկը մլլացող խաշամի բույրն է՝ թախծոտ ու հաշիճի նման թմրեցնող: Մա Հայաստանում ապրող մարդկանց, մեր հոգիների բույրն է: Մա չի նշանակում, թե Հայաստանում մարդիկ մեղամտալի են: Ուղղակի այստեղ հոգիները, մարդկանց հոգիները հազարամյակներով մլլում են խաշամի նման երկինքը պատելով թախիծի բույրով: Եվ ծխի հետ տարածվող այդ բույրը ջերմության ու եռանդի է վերածվում միայն երբ բռնկվում է խաշամը: Դուք տեսե՛լ էք, թե ինչ է տեղի ունենում, երբ բռնկվում է խաշամը: Հնարավոր չէ մարել այդ կրակը: Խաշամը երկար, շատ երկար կարող է մլլալ, անասելի երկար: Բայց երբեմն վերջնականորեն բռնկվելու համար նրան քամի է հարկավոր, մի փոքրիկ քամի: Իսկ մինչ այդ խաշամը մլլում է՝ թախծոտ ու հաշիճի նման թմրեցնող, և թախիծի տարածվող այդ բույրը վկայությունն է այն բանի, որ կրակ կա նրա մեջ, կենդանի է նրա խորքում կրակը: Եվ այդ կրակի բորբոքումն է, որ մթնոլորտը մաքրում է թախիծի բույրից...

Դա, ուրեմն, Հայաստանի առաջին բույրն է՝ մլլացող խաշամի բույրը:

Հաջորդը խորովածի բույրն է, որ դարձյալ երեկոյան աղջամուղջին կարելի է զգալ Հայաստանի ցանկացած անկյունում՝ բնակելի թե անմարդաբնակ: Այս բույրով առնականությունը հայտարարում է իր գոյությունը մասին, զծում է իր սահմանները:

Այսպես բուրում ենք մենք, այսպես բուրում են մեր հայրերն ու որդիները, այսպես բուրում է մեր առնականությունը, մեր խիզախությունը, մեր ուղղամտությունն ու քաջությունը: Այսպես բուրում են Հայաստանի տղամարդիկ...

Հաջորդը, ամենանուրբն ու սիրելին՝ լավաշի բույրն է, թարմ լավաշի, թոնրատնից դուրս չբերված ու թոնրի մեջ հասունացող լավաշի բույրը: Մա Հայաստանի կանանց բույրն է. արբունքի ու կանացիության, մայրության ու կանացի սիրո բուրը դրսևորումների բույրը: Այսպես բուրում են մեր մայրերը՝ մեր հայրերի սիրած կանայք, այսպես բուրում են մեր սիրելի կանայք: Այսպես բուրում են նաև մեր դուստրերը, որ մեր կանանց ու մայրերի պես զավակներ են ծնելու խաշամի պես թախծոտ ու բռնկուն մեք երկրի համար:

Հայաստանում, գիտե՛ք, սերն էլ բույր ունի. սերը բուրում է թարմ լավաշի մեջ փաթաթած տաք խորովածի պես...

**Նիկոլ ՓՍՇԻՆՅԱՆ**  
«Երկրի հակառակ կողմը» վեպից

## «Եթե կան այդ երեք հենասյուները՝ կա ազգը, եթե չկան, ապա ազգը կա՛մ կաղում է, կա՛մ փլվում է». Լևոն ԶԱՎԱԽՅԱՆ

**Լևոն Զավախյանը** մեր օրերում ամենաշատ ընթերցվող գրողներից է: Ծնունդով լուռեցի արձակագիրն իրեն համարում է Թումանյանի շարունակողը՝ շեշտելով, որ Երևանին նայում է Թումանյանի աչքերով՝ լուռեցու աչքերով:

Լ. Զավախյանը 2019 թվականին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Օնկան ծերին» գրքի համար, 2017 թվականին արժանացել է Մովսես Խորենացու մեդալի, 2010 թվականին «Զիրվա» պատմվածքի համար ստացել է խաղաղություն և հանդուրժողականություն տարածելու համար մրցանակ Ադրբեյջանի «հանդուրժողական կենտրոնի» կողմից:

Գրողը շուտով կմոտենա 70-ին. իր ապրած տարիների, իր ստեղծագործությունների, հայրենիքի՝ անցյալի, ներկայի ու ապագայի մասին նրա հետ գրուցեցիկը Վերնիսաժի հարկատվությանը: Ի դեպ, Լ. Զավախյանը Վերնիսաժում է աշխատում շուրջ քառորդ դար և, ինչպես ինքն է ասում՝ երեսից արծաթն է ծախում, տակից՝ պատմվածքները, և այն ամենին չի համարում Եսթետիկ վայր, այլ սոցիալական տառապանքից ծնված հրամայական:

– **Պարոն Զավախյան շուտով կլրանա Ձեր 70-ամյակը, Ձեր կյանքում ականատես եք եղել հասարակարգերի փոփոխության,**

**ապրել եք հայրենիքի անկախության բերրի րանքը, ի՞նչ կարևոր շրջադարձեր են եղել, որոնք ազդել են, փոխել են սերունդների արժեհավասարը:**

– Գրողի համար երանելի ժամանակաշրջան են ապրել, որովհետև մի ակնթարթում, մի քանի տարիներում, տասնամյակներում կյանքը սրբնաթաց առաջ գնաց, և մենք տեսանք այնպիսի բաներ, որ հարյուրամյակներում չէինք տեսել. տեսանք Մովսեսական Միություն, Հայաստանի անկախություն, նոր կարգեր, և դա, իհարկե, մեծ փոփոխություններ բերեց մարդկանց մեջ, սոցիալական համակարգում: Իսկ գրողի համար բավականին մեծ փոփոխություն էր: Ես, օրինակ, չէի լինի այս մակարդակի գրող, որ եղա:

Ես իմ գրվածքները կարող էի վերնագրել նաև Էսպես պատմությունը ըստ Լևոն Զավախյանի. իմ ամեն պատվածքի պլոտեն իր ժամանակաշրջանն է թելադրել:

Ահռելի բան տեսանք:

– **Խոսենք Ձեր պատմվածքների ու պատմվածքների հերոսների մասին: Ծաբաթվա մի քանի օրեր լինում եք Վերնիսաժում, սա յուրատպի միջավայր է, որտեղ ամենատարբեր մարդիկ են լինում: Արդյոք նաև այստեղի՞ց եք քաղում Ձեր գործերի հերոսներին:**

– Իսկական գրողը կամ պետք է շրջագայի աշխարհով, կամ աշխարհը պիտի պտտվի իր շուրջը: Իմ բախտից՝ աշխարհն է իմ շուրջը պտտվում. ես մի այնպիսի գրող եմ, որ իմ մեղրը մեղրաճանձի նման ստեղծում եմ բազմաթիվ ծաղիկների նեկտարից, ու քանի որ տարբեր մարդիկ են իմ շուրջը լինում՝ աշխարհի տարբեր կողմերից, նրանցից ես բանահավաքչություն եմ անում, նրանցից է ստեղծվում իմ պատմվածքների խորիսկը:

Ես այստեղ մի պահ եմ ուզում առանձնացնել. Գիտեք, իմ վերջին մրցանակը պատահական չէր, որ Հովհաննես Թումանյանի 150-ամյակի տարում եղավ, ինչ-որ տեղ ես ինձ այդ մարդու գործի շարունակողն եմ համարում: Ինձ համարում են Թումանյանի «շկոլայի» արտահայտությունը, քանի որ ես Երևանը և գյուղը նայում եմ Թումանյանի աչքերով:

– **Մեր օրերի հերոսն ո՞վ է.**

– Հիմա հերոս բառն ինձ համար բավականին արխայիկ է հնչում՝ կտրիճների ժամանակաշրջանն անցել է: Մեր օրերի հերոսն արժանապատիվ քաղաքացին է, որն ապրում է հասարակության ցավերով և առաջընթացով:

Ինձ համար իսկական հերոսն ապրող,

30

արարող մարդն է, իսկ հերոսի կերպարը, որը միշտ մեզ ուղեկցել է, սոսկ քարոզչական հնարք է մարդակնց գոմբիացնելու համար:

**- Ինչպե՞ս եք վերաբերվում ժամանակակից հայ գրականությանը, նորօրյա գրողներին, նրանց կերտած կերպարներին:**

- Կյանքում շատ բան է փոխվել, բայց գրականությունը, դժբախտաբար, մնացել է նույնը, ժամանակին համընթաց չի գնում: Թեկուզ ամենախոշոր գրողներն են Տոլստոյը, Դոստոևսկին, Բալզակը, Դյուման և այլք, բայց հիմա ո՞նց կարելի է նրանց նման գրել. այն ժամանակ հեռուստատեսություն, համացանց չի եղել, ինչ-որ տեղ նրանք պուժետային բաներ են գրել մարդկանց հաճելի ժամանց պարզելու համար:

Հիմա կյանքը փոխվել է: Կյանքին հարի՛ր գրելաճճը պիտի փոխվի:

**- Վերջին աղմկահարույց իրադարձություններին էլ անդրադառնա՞նք. որպես մտավորական, գրող՝ ի՞նչ կարծիք ունեք՝ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայոց լեզուն պե՞տք է պարտադիր ուսուցանվի, թե՞ ըստ հայեցողության:**

- Ուրե՛մ, խոշոր երկրներն այդ պրոբլեմը չունեն. Նիկոլ Փաշինյանը համեմատում է Հարվարդի համալսարանի, Մորբոնի, Քեմբրիջի հետ, և այլն. Նրանք այդ պրոբլեմը չունեն, իսկ մենք ունենք:

Աշխարհի առումով երկու պրոբլեմ կա. մի դեպքում՝ ընթանում է գլոբալիզացիայի ճանապարհով մարդակենտրոն պետության

ստեղծում, մյուս դեպքում՝ ազգային ուժեղ պետականության ստեղծման ճանապարհով:

Հիմա եթե մենք էլ մարդակենտրոն երկրի ճանապարհով գնանք, ոտքի տակ կկորչենք, որպես ազգ կասիմիլյացվենք, կվերանանք, կայրճենք:

Մենք պարտադրված ենք գնալ մեր ազգային պետությունը ստեղծելու ճանապարհով, իսկ դրա համար մեր Մահմանադրությամբ ամրագրված է, որ մեր պետական լեզուն հայերենն է, ըստ այդմ էլ հայոց լեզվի ուսուցումը պիտի պարտադիր լինի համալսարաններում, ինստիտուտներում...

Հետո թյուր կարծիք կա, թե խոշոր երկրները գնում են գլոբալիզացիայի ճանապարհով. Թրամփը վերջերս հայտարարեց, որ ԱՄՆ-ը պիտի մեծ ազգային ամուր պետականություն ստեղծի: Այսինքն, արդեն խոշոր երկրներում էլ են կարևորում ազգային պետականության ստեղծումը: Բսկ մեզ նման փոքր երկրներում պարտադրված ենք մեր ազգային պետականությանը տեր դառնալ, ինչի համար անհրաժեշտ է և՛ մայրենիի, և՛ գրականության, և՛ հայ ժողովրդի պատմության ուսուցանումը:

Պատկանական ասում է՝ ինչ հենապյուների վրա է ստեղծվում ազգը. Ազգը մայրենի լեզուն է, հայրենի դավանանքն է կրոնը, և ազգի գաղափարախոսությունը, որն արտահայտվում է ազգի պատմությունով: Եթե կան այդ երեք հենապյուները կա ազգը, եթե չկան, ապա ազգը կա մ կաղում է, կա մ փլվում է:

**- Այսօր շատերն ահազանգում են, որ կա ազգային ինքնության, ազգային արժեհամակարգի պահպանման խնդիր, համա՛մի՛տ եք արդյոք: Նշեցի՞ք, որ շատ պե-**

**տություններ գնում են գլոբալիզացիայի ճանապարհով, արդյո՞ք Հայաստանը հիմա այդ ուղին է բռնել, և եթե այո՝ կմարսի՞ մշակութային այն վերածնունդը, որոնք հիմա կարծեք թե պարտադրվում են, և ինչի՞ կհանգեցնի այն՝ հաշվի առնելով, որ Հայաստանը փոքր պետություն է:**

- Աշխարհը կմարսի, բայց հայ ժողովուրդը, եթե ուզում ենք հայ մասնք, չի մարսի, խոշոր պետություններն ինչո՞ւ են հատկապես Իրանի վրա այդպես զրգոված, որովհետև ֆունդամենտալ ազգային երկիր է:

Մարդու իրավունքների անվան տակ ԼԳԲՏ-ն է հանդես գալիս, քարոզվում է նրանց ազատությունը, և այլն: Մենք ավանդապաշտ երկիր ենք, ընտանիք սիրող երկիր ենք, ընտանիքաստեղծ երկիր ենք, ընտանիքը որքան ամուր է, այնքան պետությունն է ամուր:

Ես բան չեմ ասում, որ Մել Դալուզյանին պաշտպանում են, և այլն, իր իրավունքն է, մենք ոչինչ չենք ասում, կարող է իր սեռն էլ փոխի, կյանքն էլ փոխի, ո՞վ է նրան կաշտում, որ Նիկոլ Փաշինյանն իր պաշտպանության տակ է առնում, մենք ուրիշ բանին ենք դեմ. մենք այդ ամենը քարոզելու դեմ ենք:

**- Պարոն Զավախյան, սա Ձեր երազա՞ծ Հայաստանն է:**

- Ո՛չ, Բմ երազած Հայաստանը պիտի գա ու, Չարենցի խոսքերով ասած՝ մտնի «համաշխարհային Սոփարկում»:


Հայաստանը դեռ «չոչեչոչ» է առաջ գնում, Ես ուզում եմ հավատալ, որ կգա ժամանակը Հայաստանը յոթմորճանոց քայլերով առաջ կգնա, և դա իսկապես կլինի մեր քայլը:

Չարուհի ԴԻԼՆՅԱՆ




**ԶՍՊԻԱՑՈՂ ՎԵՐՔԵՐ**

7.XII.1988 թ. երբ ողջ աշխարհը մեր կողքին էր



# Ափսոսում եմ, որ մեծացա...




Հիշողությունը մարդու ապրածի իրական արձագանքն է, իսկ երազանքը՝ չապրածի: Եվ ապրած ու չապրած տարիներն էլ ընդամենը կյանք են կոչվում, որ հաճելի ակընթաքներով ոչ միայն հիշում ու հրճվում ենք ապրածի, այլ նաև մի քիչ էլ մխիթարվում չապրածի համար:

Այսօր այդ զգացումներով ու հաճելի հիշողություններով է իր ծննդյան վեց տասնամյակը դիմավորում Պապ Հայրապետյանը: Մարդ, ով իր անցած գնացած ու ներկա օրերի մեջ երբեք չի ափսոսում, որ ապրել է այսպես, այսպես համեստ ու հարգալից, որ շրջապատը, ընկերները, ծանոթ բարեկամները, բոլոր բոլորը իր մասին խոսում են միայն գովեստով, խոսում են ու ընդունում, որ իրենց կողքին Մարդ է մեծացել, հասակ առել:

Հիշողություններ, հիշողություններ ապրած օրերի մասին: Հիշողություններ, որ նրան տանում են անցյալի հեռուները ու բերում այսօրը, այս պահը, երբ նա մտովի շրջվում ու նայում է իր անցած ճանապարհին ու ինքն իրեն հարց տալիս, արդյո՞ք ճիշտ են ապրել, արդյո՞ք ճանապարհը, որ անցել են, եղել է պարզ ու մաքուր, շիտակ ու անբիծ... Արդյո՞ք...

Հիշողություններ, հիշողություններ, որ նրան կրկին մտովի իր ծննդավայր են տանում՝ Ջովաբեր՝ հայրական տուն: Այստեղ, Ջանգվի այս խաղաղ ափին, որտեղ գարունները պեկոծուն ջուրը դուրս է գալիս ափերից, իսկ ամռանը բարկ արեւի տակ ցամաքում ու մի բարակ-բարակ առու է դառնում, 1959 թ. հոկտեմբերի 25-ին որմնադիր Կույբիշի ընտանիքում արու գավակ ծնվեց: Հայրական Պարոյր պապը նրան Պապ անվանակոչեց: Այսօր մեր թագավորների ճանապարհով թող գնա ու կյանքում մեծ մարդ դառնա: Ուրախությունը ափետափ լցվել էր Կույբիշի ընտանիքում: Գյուղում նա մեծ հարգանք էր վայելում: Ամեն մեկի նոր կառուցվող բնակարանի ամխտի մասնակիցն էր նա: Քեֆ, ուրախություն, որ ծով-ծով տալով՝ տնից տուն էր անցնում: Մեծացավ Պապը ու նրա մանկության օրերն այստեղ՝ այս գետի ափերին անցան: Հետո իր հիշողությունների մատյանում այդ մասին նա կգրառի: «Գետը ձգում էր ինձ՝ դեռ մանկության օրերին: Երբ գյուղում էի՝ հասակակիցներիս հետ ամեն օր էի այնտեղ լինում, իսկ հետո արդեն ոչ միայն կարոտ



եր, այլեւ՝ հիվանդության նման մի բան ու ափսոսումի ցավ:

Անտառ չունեինք, մեր ջրային տարածություն կոչված այդ նվազ գետակն էր մեզ շարունակ ձգում, որը ձնհալի վարարմանն էր ինքնահավանորեն ահագնանում, մնացած ժամանակ առանց կոշիկ հանելու կարող էինք անցնել՝ քարից քար քայլ օգտելով, իսկ ամենախոր տեղը ծնկներս չէր ծածկում: Գետում ձկներ շատ կային ու մեր մայկաները ցանցեր արած՝ երեխայական չարածճիություններով մեկ-մեկ ձուկ էինք բռնում:

Բնության այլ հրապուրանքներից գուրկ էինք: Երկու կողմից հարեան բնակավայրերն էին կպած, դիմացի դաշտավայրում գյուղացիների եւ կլտնտեսության հողերն էին, գյուղացիները հիմնականում կարտոֆիլ էին ցանում: Բնություն չէր, որը գուրկ էինք գյուղի թիկունքից՝ վերջին տներին միջից բարձրացող ու մինչեւ Հրազդան քաղաք տարածվող լեռն սարահարթում, առանց մի հատիկ ծառի ու թփի, միայն քարերով ծածկված լանջերով (խոտի փոխարեն քար էր աճում), տափարակի ցորենի արտերով, որոնք իրարից անջատվում էին լայն, խամրականաչ թմբերով ու հանած քարերի կոյտաշարերով: Չորս-հինգ տարեկանից սարահարթը մեզ համար հարազատ վայր էր, ամառ թե ձմեռ այստեղ էինք: Ֆուտբոլի փոքր դաշտ էինք սարքել: Չմռանն էլ սառած գետակի ողորկ, ոլոր-մոլոր ժապավենի վրա էինք ժամանակ անցկացնում՝ հնարովի հոկեյ խաղալով:

Մանկության տարիներին ծյունն առատ էր, քար չէր երեսում: Սահում էինք ամեն ինչով, որ հնարավոր էր ճարել կամ հարմարեցնել, խանութի եւ ինքնաշեն դահուկներով ու սահնակներով, սովորաբար ու հաստ պարկով, պայտասակով եւ առանց որեւէ բանի:

Ա՜խ, ինչքան են կարոտել այդ ժամանակները, երբ չէինք մտածում ոչ մի բանի մասին, մեզ միայն հետաքրքրում էր այն, թե ինչ խաղանք ու ինչպես զվարճանանք: Երբ չէինք ճանաչում ինքներս մեզ ու շրջապա-



տող աշխարհը տեսնում էինք պայծառ գույներով, վառ երանգներով:

Ափսոս, որ մենք էլ երբեք չենք կարող վերադառնալ, չենք կարող գտնել հետադարձ ճանապարհ դեպի մանկություն, էլ երբեք չենք զգա այն ամենը, ինչ զգացել ենք մանուկ ժամանակ: Կյանքն այսպիսին է, ժամանակն անցնում է ու ամեն ինչ փոխվում է, փոխվում ենք մենք ու մեր շրջապատը, մեծանում ենք, փոխվում է մեր մտածելակերպը, ամեն ինչին սկսում ենք այլ հայացքով նայել, առաջ են գալիս շատ հարցեր, որոնց պատասխանները շատ հաճախ չենք էլ գտնում:

Թեեւ վաղուց ծուլվել են քաղաքի շտապօգնության կայանքին, բայց միեւնոյն է՝ սիրտս գյուղի ժամացույցով է աշխատում. մի գարմացեք՝ ցերեկն արեւին են նայում, գիշերը՝ լուսնին, ու դա ուրիշ կենսառիթմ է: Գյուղում միայն սա չէ, որ ուրիշ է...

Գյուղում գույներն են ուրիշ՝ քո երկինքն ամենակապույտն է, կանաչն՝ ամենականաչը, օդն ամենաթափանցիկն է, ջուրն՝ ամենազուլալը... Երեւի մանկությանն աչքերով են նայում, դրանից է...

Գյուղում համն ու հոտն է ուրիշ՝ թե կերած-խմածի, թե խոսք ու զրույցի...

Գյուղում երեխեքն են ուրիշ, մարդիկ են ուրիշ, պարզ, միամիտ, հավատացող: Գյուղի ընկերներս էլ են ուրիշ, երբ իրար հետ ենք, աշխարհին ու իրար դեռ մեր մանկությանն աչքերով ենք նայում՝ ճիշտ ու սխալը սահմաններ ունեն ու դրանց միջեւ փիլիսոփայական միջակայքեր չկան...

Գյուղում դեռ պահպանվող լիքը «ուրիշ» բաներ կան... Գյուղում խոտերի մեջ պառկող, երկնքին նայող մանկությունն է ուրիշ, աստղերից ժպտացող երազանքն է ուրիշ... թաղի երեխեքի հետ, առանց թուլտվության դաշտ թռնողի, սարի գագաթ բարձրացողի ազատության ընկալումն է ուրիշ, հողը ոտքերի տակ կամ ափերի մեջ տորոածի Հայրենիքն է ուրիշ...

Հիշում են դարոց գնալու իմ առաջին օրը, իմ առաջին ուսուցչուհի ընկեր Դուխիկ Գեւորգյանին, հիշում են, երբ իմ ձեռքը բռնեց ու դասարան տարավ...»

Հետո դարոց ու դարոցական միամիտ օրեր: Լավ էր սովորում ու առանձնանում էր իր հասակակիցներից: Ափսոս... Տասներկու տարեկան էր, երբ դժբախտ պատահարից մահացավ հայրը: Չմեռ էր, բուք ու սառնամանիք: Թափորը տնից մինչև գերեզմանոց էր ձգվում: Մեկիկ, մե-

50

Կիկ հիշում է այդ օրերը, սիրտը լցվում է: Ընտանիքը որբացավ: Մանկան ուրախությունը լցվեց արցունքներով ու մի վայրկյանում աշխարհն ասես շուռ եկավ: Ընտանիքում չորս երեխաներ էին՝ Ալվարդը, Գրիշան եւ Ծաղիկը, ինքը միջնեկն էր ու ծանրությունը իր բաժին չափով ծանրացավ նաեւ նրա ուսերին: Հարկավոր էր թեւ ու թիկունք լինել այրի մորը՝ Բավականին, ուն աշխարհի չափ սիրում էր ու աշխարհի չափ հարգում: Իսկ հիմա՝ առավել եւս եւ իր բոլոր հաջողությունների համար նրան է պարտական...



– Մայրս, իմ մայրը – ասում է, – աշխարհում նրանից քանկ ու նվիրական որեւէ այլ բան չկա: Ես ինձ համար եւ մայր է եղել, եւ հայր: Կյանքում ոչինչ չի խնայել մեզ համար: Կոթոթյուն, ուսում:

Իսկ մայրը: Մոր համար բոլոր երեխաները հավասար են ու նրանց հավասարաչափ սիրում է: Բայց այսօրը քանի որ Պապի օրն է, նա ասում է.

– 1977 թ. 33 շրջանավարտ տվեց Ջովաբերի նորաբաց միջնակարգ դպրոցը եւ այդ 33-ի մեջ միակ երջանիկը նա էր, որ կարողացավ բուհ ընդունվել: Ճանապարհը նրան տարավ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Այն ժամանակ այդ ֆակուլտետը ընդունվելը շատերի երազանքն էր: Մեկ տեղի համար 25 հոգի էր պայքարում:

Այդ օրերի մասին նա այսօր անափ կարոտով է հիշում, հատիկ առ հատիկ ապրում պահի ուրախությունն ու թախիծը, երբ համալսարանի պատին փակցրած բուհ ընդունվածների ցուցակում իր անունը տեսավ: Հիշում է մոր արցունքախառն անափ ուրախությունը, երբ իմացավ, որ տղան ուսանող է դարձել:

Ի՞նչը կարող է փոխարինել ուսանողական մեկը մյուսից հետաքրքրություններով լեցուն տարիներին, անջնջելի տպավորություններին ու երբեք չխանդող հիշողություններին: Գրքի նկատմամբ մեծ սեր ուներ: Պատմում է, որ ճանապարհածախսի եւ Երեւանում մնալու զումարը տնտեսում էր, այլ խնայողություններ անում ու դրանով գիրք գնում՝ հիմնականում պատմական թեմաներով:

– Ամեն շաբաթ երկու-երեք գիրք էի գնում: Իսկ երբ բուհն ավարտեցի՝ արդեն գրքերի հաստափոր գրադարակներ ունեի:

Ավարտեց բուհը՝ երեք ամիս զինվորական ծառայություն եւ ապա՝ աշխատանք: Ընտրեց լրագրողի մասնագիտությունը ու այսպես իրաչափ տված գրիչին ու թղթին՝ նա քայլեց ու քայլում է արդեն շուրջ երեքուկես տասնամյակ:



– Ամեն ինչ պատահականորեն ստացվեց ու երբեք մտքովս չէր անցնի, որ պետք է աշխատեմ շրջանային «Սեւան» թերթում: Իմացա, որ աշխատանքի տեղ կա: Դիմեցի՝ 1982 թվականն էր, ամռան մի օր: Փորձնական հողված գրեցի: Խմբագիրը հավանեց: Հաջողությամբ հաղթահարեցի փորձաշրջանը եւ դարձա «Սեւան» շրջանային թերթի գրական աշխատող:

Խմբագիրը՝ խիստ ու իր աշխատանքի մեջ հմուտ լրագրող երջանկահիշատակ Սուրեն Սուրադյանյանը, երիտասարդ տղայի մեջ տեսավ այն ամենը, որ անհրաժեշտ էր թերթում աշխատելու համար՝ գրելու եւ ստեղծագործելու ծիրք, պատասխանատվություն վստահված գործի նկատմամբ, աշխատասիրություն: Ժամանակի խստապահանջ ղեկավարությունը իր աշխատանքներում շատ էր կարեւորում թերթի գործունեությունը, լրագրողի աշխատանքը:

– Դժվար աշխատանք էր՝ անչափ պատասխանատու: Քո աշխատանքը մի քանի կողմից մանրադիտակի տակ էր եւ սխալվելը կարող էր ծակատագրական

խմբագիրը հավանեց նյութ: Թերթը տավելուց հետո մի աղմուկ-աղաղակ շրջավերտի գործկոմում: Ժողկրթբաժնի վարիչը գործկոմի նախագահին մոտ մարդ էր՝ եկել էր ու դժգոհել: Ես ինձ եմ պնդում, նրանք՝ իրենցը: Բայց... Խնդիր դրվեց ինձ աշխատանքից ազատել: Դե ես՝ սկսնակ լրագրող եւ գյուղից քաղաք եկած երիտասարդ, ո՞վ էի ժամանակի «ամենագորեղ» ղեկավարության առաջ: Բարեբախտաբար խմբագիրը ինձ «տեղ» կանգնեց ու բավարարվեցին նկատողությունով: Սա իմ առաջին եւ վերջին աշխատանքային նկատողությունը եղավ, որը նաեւ ինձ համար կյանքի դաս դարձավ: Հետո, տարիներ հետո ես ու ինձ աշխատանքից ազատել ցանկացող գործկոմի նախագահը՝ երջանկահիշատակ Գագիկ Պողոսյանը լավ ընկերներ դարձանք եւ կատակով էինք հիշում այդ օրը:

...1985-ին նրան հրավիրում են արդեն կոմերիտական աշխատանքի, սկզբում բաժնի վարիչ, ապա՝ ընտրվում է շրջկոմի քարտուղար եւ առաջին քարտուղար:

– Կոմերիտական աշխատանքն ինձ շատ բան տվեց: Ես ավելի մոտիկից ճանաչեցի Սեւանը և սեւանցուն, Սեւանի երիտասարդությանը, այն տղաներին, որ հետո հեղափոխության, Արցախյան գոյամարտի մի մասնիկը պետք է դառնային: Շփում ամենատարբեր տարիքի մարդկանց հետ, ճանաչում ու հարգանք: Հետո կուսակցական աշխատանք, ապա նորից «Սեւան» թերթի խմբագրություն, 1996 թ.՝ աշխատանք նորաստեղծ Գեղարքունիքի մարզպետարանում: Սակայն Սեւանը նրան



լինել: Բայց փառք Աստծո դիմացա: Հիշում եմ նաեւ աշխատանքային առաջին նկատողությունս, որ ստացա խմբագրից: Ուղղակի զավեշտի նմանվող մի բան էր: Ավանդույթ էր. ուսումնական տարվա սկզբին ստուգում էինք դպրոցների վիճակը՝ թե ինչպես են կատարվել շինվերանորոգման աշխատանքները: Դպրոցներից մեկում որակի խնդիր նկատեցի: Եկա ու գրեցի:

ծգում էր ու 1997 թ. նա վերադառնում է հարազատ քաղաք եւ նշանակվում քաղաքապետարանի լրատվության բաժնի վարիչ: 1998 թվականն էր: Ծանր ժամանակներ էին տպագիր մամուլի համար: Չկար ֆինանսավորում: Անցման ծանր ժամանակին զոհ գնացին քաղաքային եւ շրջանային

60

բազմաթիվ թերթեր: «Սեւան»-ը միակ համայնքային թերթն էր Գեղարքունիքի, հարեւան Տավուշի եւ Կոտայքի մարզերում, որ շարունակում էր տպագրվել:

– Մեր թերթի գլխավոր խմբագիրը՝ իմ կողմից շատ հարգված եւ սիրված լրագրող Արծվիկ Գրիգորյանը մեկնեց Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Չկար մեկը, որ համձն առներ դեկավարելու խմբագրությունը: Այն ժամանակվա քաղաքապետ Աշոտ Ալեքսանյանի կարգադրությամբ խմբագրի պարտականությունների կատարումը դրոշմեց ինձ վրա: Երկու աշխատանքի համատեղումն անչափ ծանր էր: Երկմտում էի եւ այդ պայքարում առաջնությունը տվեցի թերթին եւ նշանակվեցի գլխավոր խմբագիր, որտեղ եմ մինչեւ այսօր:

Պապ Յայրապետյանի գլխավորությամբ հետագա տարիները դարձան թերթի վերելքի եւ ինքնահաստատման տարիներ: «Սեւան»-ը ոչ միայն մնաց, պահպանվեց, այլև դարձավ համրապետության առաջատար մարզային-համայնքային թերթերից մեկը եւ սկսեց հավասարը հավասարի հետ քայլել: Բազմաթիվ դրամաշնորհներ, որին արժանացավ «Սեւան»-ը ու նրա խմբագիրը, պատվոգրեր եւ շնորհակալագրեր, մըրցանակներ, որ այսօր զարդարում են գլխավոր խմբագրի աշխատասենյակի մի անկյունը՝ ստացված միջազգային եւ տեղական ամենահեղինակավոր կազմակերպությունների կողմից: Երկու տասնյակի հասնող որակավորման դասընթացներ, ուղեւորություններ եվրոպական մի շարք երկրներ, ԱՄՆ: Հատկապես վերջինը շատ է տպավորվել Պապ Յայրապետյանի հիշողությունում եւ որի մասին նա հիացմունքով է խոսում:

– Շփումը ամերիկահայ համայնքի հետ ինձ բերեց այն համոզման, որ հայը միայն այստեղի հայը չէ: Հայաստանն ու հայը ամենուր են եւ աշխարհի ամեն մի անկյունում, որտեղ մի հայ կա՝ կա նաեւ մի փոքրիկ Հայաստան: Մեկամայա ուղեւորությունը ԱՄՆ նաեւ ինձ



գործի առումով շատ բան տվեց: Ես հասկացա, որ գործ ունեմ լուրջ եւ պատասխանատու մի բնագավառի հետ, որտեղ ես ասելիք ունեմ եւ անցնելու ճանապարհ:

Ու անցավ: Անցավ հաստատականորեն, վճռականորեն՝ անդավաճան իր սկզբունքներից եւ որդեգրած աշխատանքից:

– Ինձ՝ իմ կուլեզաներից մեկը մի առիթով հարցրեց, թե ո՞րն է իմ աշխատանքային երկարակեցության գաղտնիքը՝ նկատի ունենալով, որ ես արդեն 4-րդ քաղաքապետի հետ եմ աշխատում եւ բոլորի հետ էլ բարիդրացիական հարաբերություններ եմ ունեցել: Մի պահ մտորեցի, հետո գտա պատասխանը, որ կարծես նրան բավարարեց.

եթե դու ճշմարտության կողմնակիցն ես եւ ատում ես այն՝ ինչը կա իրականում ու նաեւ մարդկային հարաբերություններում պարզ ես, անկեղծ, անմիջական, դիմացինը հասկանում է քեզ եւ խնդիրներ չեն առաջանում:

Այսպիսին է նա ամենուրեք՝ շրջապատում, ընկերական միջավայրում, գործընկերների մոտ, այն տասնյակ կազմակերպությունների դեկավարների հետ հարաբերություններում, որոնց հետ նա աշխատում է եւ որոնց օգնությամբ կարողանում է պահել եւ տպագրել թերթը:

Եվ ոչ միայն այս: Օգտագործելով իր լայն կապերը՝ նա համագործակցելով միջազգային միջառք կազմակերպությունների հետ՝ կարողանում է իր նպաստը բերել Սեւանին ու նրա գյուղերին: Ահավասիկ. «Հայ դպրոց» հիմնադրամը, որի կենտրոնակայանը Լոս Անջելեսում է: Հիմնադրամի տնօրենը՝ Մոնիկա Տեր Գրիգորյանը, փոխտնօրենը՝ Մարալ Անջարգուլյանը Պապ Յայրապետյանի համար հարազատ մարդիկ են եւ նրանց ուժերն օգտագործելով՝ հաջողվել է նորացնել Սեւանի եւ հարակից գյուղերի մի շարք մանկապարտեզների եւ դպրոցների գույքը:

– Աշխատանքում կա՞ չիրականացված երազանք, – հարցնում եմ հոբեյարին:

Մի պահ սրտնեղվում է չարածի համար, որ բնավ էլ իրենից կախված չէ:

– Երբ խմբագիր դարձա, իմ առջեւ նպատակ էի դրել ավելացնել բաժանորդների թիվը, որը հնարավորություն կտար ավելացնել թերթի պարբերականությունը եւ թվաքանակը: Ցավոք, դա ինձ մասամբ հաջողվեց...

Նա իրեն ճշտասիկ է համարում, որ պարել է այս կյանքով, որ նվիրվել է այս գործին: Երջանիկ է իր կնոջ՝ Ժաննայի հետ, երջանիկ է իր ընտանիքով՝ երեք երեխաներով՝ Արմանով, Դավիթով, Հայարփիով և նրանց ընտանիքներով: Երանք բոլորն էլ բարձրագույն կրթություն ունեն, բարձրագույն են երջանիկ պապին արդեն հինգ թռռիկ են պարգեւել:

Այսպես պարում է նա ու այսպես շարունակում գրել իր կենսագրությունը՝ մաքուր, անաղարտ:

# Խոսք Րաֆֆու գերեզմանի վրա

Ճապոնացիների մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետևելով էս գեղեցիկ սովորությանը, էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Րաֆֆու հոգուն:

Անմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգևորեցիր վիստերին, որ տկարներիս համարձակություն ներշնչեցիր ու դրկեցիր հզորների դեմ նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը, որ անհազատություն տվիր հայ ժողովրդի հոգուն և ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, էսօր եկել եմք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ և մեր ցավերը, որ միշտ ժառանգում են թարմ, և մեր գգացմունքները, որ համակված



են քո շնչով ու հիշատակով: Եկել ենք քո գերեզմանի վրա օրհնելու և փառաբանելու քո տված անհազատությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր և էն նահատակների շարքերը, որ գնացին քո ցույց տված ճանապարհով:

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, որ քո մահից 25 տարի հետո դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, և թերևս հեռու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ քո շիրմի վրա ու կանչել. – Արդեն կատարված է քո իղձը, ո՞վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են էնքան արյուններ, էնքան կոտորած, և «ամեն կողմից պանդուխտ հայագրիչ դիմում են իրենց սիրուն հայրենիք...»: Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ո՞վ անհանգիստ հոգի:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ, 1913.



## Երգարվեստին նվիրված հայուհին

Գեղեցիկ երգի կատարումը լսել են մի քանի տարի առաջ, երբ նա դեռ երաժշտական քոլեջի ուսանողուհի էր: Երգը Հայաստանին էր նվիրված, կատարումն էլ անթերի էր:



Այսօր Գեղեցիկ էվոյանը Կալուգա քաղաքի «Melody» նորաստեղծ երաժշտական ստուդիայի հիմնադիրներից է, որը գործում է 2019 թվականի հունվարից: Երգի նկատմամբ սերը, իր աշխատասիրությունը երիտասարդ մանկավարժ երաժշտի շուրջ հավաքել են երեխաների ու մեծահասակների, որոնց համար երգարվեստին նվիրվելն ամեն ինչից վեր է: Երբ շնորհաշատ հայուհուն հարցրեցի, թե ինչպես է համատեղում կրթության (այժմ սովորում է Մոսկվայի մշակույթի պետական ինստիտուտի ակադեմիական վոկալի բաժնում) և երգեցողության դասավանդման գործը, նա համեստորեն պատասխանեց, որ սիրով է այդ ամենն անում: Նա նաև Կալուգայի պետական ֆիլիարմոնիայի երգչախմբի անդամ է:

Քեզ բարի երթ, սիրելի Գեղեցիկ: Թող իրականանան քո բոլոր երազանքները, իսկ երազանքները հեշտ են իրականանում, երբ բնությունից քեզ տրված շնորհներն անմնացորդ վերադարձում են...

**Տաթևիկ ՆԵՐՍՅԱՆ,**  
 հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

## Ստամբուլում տեղադրվել է Կոմիտասի հուշարձանը



Պոլստ հայոց պատրիարքարանի բակում տեղադրվել է հայ մեծ երաժիշտ, մանկավարժ և խմբավար Կոմիտասի հուշարձանը:

«Հուշարձանի բացումը կատարվել է պատրիարքական տեղապահ Սահակ Եպիսկոպոս Մաշայանի հովանու ներքո, իսկ հովանավորն է Սարգիս Գյուլեկչը: Կոմիտասի հուշարձանի հեղինակը պոլսահայ քանդակագործ Էրոլ Սարաֆյանն է: Նա հուշարձանի բացմանը խոսել է Կոմիտասի դերի և իր կատարած աշխատանքի մասին», – ասված է տեղեկատվության մեջ:

Նշենք, որ իր կյանքի որոշ շրջան Կոմիտասը գործել է Պոլսում, ստեղծել «Գուսան» հանրահայտ երգչախումբը, որը մեծ դեր ունեցել պոլսահայության կյանքում:

1915 թ. Օսմանյան Թուրքիայի կազմակերպած և իրագործած Հայոց ցեղասպանությունը ողբերգականորեն ընդհատում է հանճարեղ երաժշտի գործունեությունը: Պոլսահայ մտավորականների հետ նա ևս ձերբակալվում և արտրվում է: Որոշ ժամանակ անց, ամերիկյան դեսպան Մորգենթաուի միջնորդությամբ, Կոմիտասին արտրից հետ են ուղարկում, սակայն ապրած արհավիրքի հետևանքով նա կորցնում է հոգեկան հավասարակշռությունը և դադարում ստեղծագործել: 1916-1919 թթ. Կոմիտասը գտնվել է Կ. Պոլսի Շիշլի թաղամասի հոգեբուժարանում: Գյանքի վերջին 16 տարիներն անցել են Փարիզի Վիլ-Էվրար և Վիլ-ժուիֆ արվարձանների բուժական հաստատություններում:

Կոմիտաս վարդապետը վախճանվել է 1935 թ. հոկտեմբերի 22-ին Փարիզում: Մեկ տարի անց նրա աճյունը տեղափոխվել է Երևան և ամփոփվել հայ մշակույթի գործիչների պանթեոնում, որը ներկայում կրում է Կոմիտասի անունը:

«Ի սկզբանե մի կարեւոր բան կա, մենք Կոմիտասին ճիշտ չենք վերաբերվում, նրան համարում ենք գեղեցիկ երգ, նոտա, հանճար, տաղանդ, բայց Կոմիտասն առաջնահերթ ինքնություն է...»

Նա մեր կենդանի հոգեւոր հայելին դարձավ, ինքը եկավ մեզ դարձի բերելու, արժեհամակարգին վերադառնալու: Մինչև այժմ չեմ տեսել մի նախագիծ, որով ինքնությանն են անդրադառնում, ներկայացնում են, թե ով էր Կոմիտասն ընդհանրապես:

Կոմիտասը մահացել է Փարիզի ամենաաղքատիկ, ամենահետաժամաց, ամենացածրակարգ հոգեբուժարանում, փայտյա կոշիկից դուրս ցցված ժանգոտ մեխից ստացած արյան վարակից... Սա ազգի դատավճիռ է... Սրա մասին է պետք խոսել, թե մենք ոնց ենք մեր հանճարին վերաբերվում՝ ունենալով բազում միլիարդատերեր, կապիտալիստներ, որոնցից երբեք մեկը չհետաքրքրվեց որտեղ է, ինչպես է Կոմիտասը: Այս վերաբերմունքի մասին Նժդեհը Արքիմեդի մասին իր իմաստախոսություններից մեկում ասում է, որ Արքիմեդին սպանող հասարակությունն ամլացավ և այլևս Արքիմեդներ չծնեց... Պետք է շնորհակալ լինենք, որ չամլացանք, ու այդ ամենից հետո Խաչատրյան ու Տերտերյան ունեցանք, այլ կոմպոզիտորներ... Որովհետեւ երբ ազգը որպես հոգեւոր միավոր մահանում է, իբրեւ կենսաբանական տեսակ մահացած է...

Այնպես որ, Կոմիտասին ու Նժդեհին հերքելով, մենք մեզ ներսից ենք սպանում:

**Գագիկ ԳԻՆՍՅԱՆ**

Հռոմոսի վանքն է, Աշոտ Գ Ողորմած արքայի տապանաքարը: Հռոմոսը Բագրատունիների տոհմական տապանատունն է, հայկական Սեն Դենին



Բագրատունյաց Հայաստանի արքայից արքա (շահնշահ) Աշոտ Գ Ողորմածի գերեզմանը Անիի մոտ գտնվող Հռոմոսի վանական համալիրում: Հայ գրողներ Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ու Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆԸ Հայոց թագավորի գերեզմանի մոտ, հնագույն հայկական մայրաքաղաք Անիի պեղումների ժամանակ (1901 թ.)

### Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԻ

Այստեղ երկնել են նախնիներդ իմ,  
Դարձել է այստեղ նյութը գաղափար,  
Հագել է այստեղ երազը մարմին,  
Չքնաղ երազը, որ չունի կոպար:  
Անի՛, դու չես լուկ հողեղեն մի գանձ,  
Դո՛ւ, ինքդ ես ոգին – մի ողջ ժողովուրդ,  
Ամեն ձև այստեղ ոճ է գերազանց,  
Ամեն ինչ այստեղ – իմաստ ու խորհուրդ:  
Ես հոգուս աչքով՝ անցած ու ներկա  
Վիճակդ եմ տեսնում՝ հենված մի սյունի,  
Որ մարտնչելով դարեր ոտընկա,  
Մեռնում է կանգնած, եթե մահ ունի:  
Սաղավարտակիր, ձեռքիս տեգ ու նետ,  
Կանգնել եմ բարձր բուրգիդ կատարին,  
Ոստանիկներիդ, ռամիկներիդ հետ  
Լսում ենք վառված սեգ զորավարին:  
Տափաստաններից, խուժանը վայրագ  
Հորդել է, եկել – հեղեղ զայրագին,  
Ուզում է, Անի՛, ընկճել լուծի տակ  
Քո ստեղծագործ, թևավոր ոգին:  
Խաժամուժ, խուժան՝ անծայր, անքանակ,  
Դարեր խուժում են – խժոյուժ, խոլարշավ,  
Ճըչում խրժածայն, դնում են բանակ  
Քո ցորենաշատ դաշտերում անբավ:  
Եվ որոտում է շեփորը ռազմի,  
Կռվում ենք մտած արյուն ու քրտինք,  
Դարեր կռվում ենք ատամ ատամի,  
Մեռնում ենք կանգնած, եթե մահ ունինք...  
Քո հին թշնամին, Անի՛, չե՞ս տեսնում,  
Խուժել է նորից քո դաշտերի մեջ,  
Բայց վառվում է դեռ մեր ակութներում  
Հինավուրց ուխտի կրակը անշեջ:  
Դո՛ւ, հին դրոշակ, դո՛ւ, բազին փառքի,  
Հենվել եմ նորից քո անմահ սյունին.  
Եվ սպասում եմ, և դարեր ոտքի  
Քո իրավաբեր շեփորիդ ձայնին...

Ռ  
Մ  
Փ  
Մ  
Ե  
Լ  
Պ  
Տ  
Կ  
Ա  
Ն  
Ն  
Յ  
Ը

### ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ (հատվածներ)

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,  
Եվ կամ՝ որի մակնունը հանգում է ՅԱՆ մասնիկով,  
Որ ուտում է ամենայն օր ճաշին տուլմա ու փլավ,  
Կամ՝ պարծանոք միշտ հագնում է հայի գոյակ ու հալավ:  
  
Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,  
Հայաստանը պիտի լինի հուսո աստղը քեզ համար.  
Օտարիներ դու մի ատիլ, մի էլ սիրիլ կուրորեն,  
Բայց դու հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն:  
  
Դու պատրա՞ստ ես թողնել կայքդ, ծնողք, եղբարք սիրական  
Սիրելվույդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահառիթ իրացան.  
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,  
Սարսափելի մահիդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ:  
Այդ ժամանակ քեզ Հայ կասես:

### ՁՅՈՒՆԸ

«Ախ, ինչո՞ւ – ինչո՞ւ կուզա պաղ ձյունը,  
Նորից ամիսներ պիտ մնամ տունը,  
Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արոտ,  
Հոտոտ ծաղիկեն պիտ մնամ կարոտ»:  
– Ձյունը որ կուզա երկնքեն ի վար,  
Իմացի՛ր, մեծ բախտ է մարդուս համար,  
Վերմակի պես տաք կծածկե գետին,  
Որ բույսի արմատը դիմանա ցրտին.  
Նա հողին կուտա հյութ, պարարտություն,  
Դաշտին ու արտին մեծ առատություն:  
Մի՛ տրտնջալ, մա՛րդ, դու բնութենեն,  
Թե տաք և թե ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

### Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

### ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Երանի՛ եր ձեզ, գովված երգիչներ,  
Դուք երգում էիք վաղ առավոտյան,  
Երբոր երազներն ապրում էին դեռ,  
Ոսկի երազներն հայի փրկության:  
  
Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,  
Խրո՞խտ, վեհապա՛նծ, թեպետև գերի,  
Եվ ձեր քընարի ձայներն երջանիկ՝  
Լիքը հըրճվանքով գալոց օրերի:  
  
Ա՛խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև  
Եվ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,  
Ոսկի երազներ՝ միրածի նըման՝  
Մեր անապատում չըբացան անհետ:

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեղից,  
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,  
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,  
Ընկնում են սըրտից և՛ երգ, և՛ աստված:

# «ՈՒՆՏԱԳԻՐԸ ԱՐՈՐԴՅԱՑ» ՀԱՅՈՑ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԼԵՉՈՒՆ ԲԱՑԱՐՁԱԿ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Մեր Ազգի հոգեւոր եղեռնը շարունակվում է և դեռ կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մենք վերականգնենք մեր զգացողության մեջ Հայոց Լեզուն որպես Ազգային Խորհուրդների Համակարգ և դրանով Ազգի սերունդների զգացողության մեջ հաստատենք այն որպես ազգային ներքին գենետիկական որակ:

Լեզու բառի մեջ էջ (ԱՋ) արմատն է, որը նշանակում է ծագում, սերում, արյունակցություն: Ըստ այդմ, Լեզուն նույնանում է Ազգին:

Ազգային Լեզուն, Ազգի ներքին գենետիկական որակ է: Ի նչ է Հայոց Լեզուն Հայի համար: Թե Արարչածին է Ազգն Արմենական, ապա Աստվածաշունչ է Հայոց Լեզուն: Աստվածային ծագում ունի նա: Այն Արարչից է գալիս: Եվ մեր նախահայր Արին Հայր Արայից իր արյան հետ ժառանգել է նաև Հայոց Լեզուն որպես իր հոգեւոր էություն: Եվ այդ Լեզվով են Արիները տարածվել աշխարհով մեկ և բազմաթիվ Արի Ազգեր ձևավորել: Այդ նույն Լեզուն են Հայր Արայից ժառանգել նաև բոլոր Աստվածները: Եվ Աստվածների հետ միայն Հայոց Աստվածաշունչ Լեզվով կարող ենք խոսել: Հայոց Աստվածաշունչ Լեզուն ազգային բացարձակ խորհուրդների համակարգ է: Հայ Ազգը, որպես բնական որակ, ի սկզբանե հարաբերվել է իր ծագումի, իր բնօրրանի հետ, բնական բազմազան երեսույթների, էությունների հետ, բնական գործունեությունների, Աստվածների հետ... Եվ այդ հարաբերությունները նա վերապրել է իր հոգեւոր կերտվածքի, իր բնավորության, իր մտածելակերպի և այլ որակական դրսևորումների միջոցով, յուրովի ընկալել է դրանց խորհուրդները և համապատասխան անուն տվել դրանց: Հենց այդ ազգային խորհուրդների համակարգն է, որ ներկայանում է որպես Ազգային Լեզու: Ազգային Լեզվի մեջ ամեն խորհուրդ իր անունն ունի,

և ամեն անուն իր խորհուրդն ունի: Եվ պատահական անուն չի լինում երբեք: Ըստ այդմ, Հայոց Լեզուն, որպես Ազգի ներքին գենետիկական որակ, իրենից ներկայացնում է Ազգային Խորհուրդների Համակարգ: Այնինչ, բոլոր օտար լեզուները, որպես արտաքին հաղորդակցման միջոց, Հայ Ազգի մեջ ներկայանում են որպես Բառերի Քերականական Համակարգ: Այսպես՝ հայերիս համար ռուսերեն Մոլնցե կամ անգլերեն Սան բառերի իմաստը որպես քերականական միավոր իմանալը բավարար է այդ լեզուներով արտահայտվելու համար: Այնինչ, հայերեն Արեգակ բառը որպես քերականական միավոր մեզ չի կարող թվարարել: Անհրաժեշտ է իմանալ, թե ինչու Արեգ, ի նչ է նշանակում Արեգը, ի նչ խորհուրդ ունի իր մեջ Արեգը, ի նչ կազմություն ունի և այլն: Ըստ այդմ, Հայոց Աստվածաշունչ Լեզուն է, որպես ազգային խորհուրդների համակարգ, մշտապես արարումի հիմք հանդիսանում արարող Արմեն Ազգի համար, քանզի բնական օրինաչափությունների խորհուրդները զգալով է միայն, որ հնարավոր է արարել: Սակայն, երբ Հայոց Լեզվի անունները մեր զգացողության մեջ կորցնում են իրենց խորհուրդները, ապա վերածվում են պարզապես անկենդան բառերի, իսկ Լեզուն վերածվում է բառային քերականական համակարգի: Եվ Հայոց Լեզուն հենց իր Ազգի մեջ որակագրվելով է և վերածվում արտաքին հաղորդակցման միջոցի, ստանալով օտար լեզուներին հավասար արժեք: Վաղուց արդեն, որպես Հոգեւոր Եղեռնի հետեւանք, մենք օտարվել ենք մեր հոգեւոր էությունից: Մենք օտարվել ենք մեր Աստվածաշունչ Լեզվից: Եվ վաղուց արդեն մենք չենք զգում Հայոց Լեզվի խորհուրդները: Եվ ազգային խորհուրդների անունները մեր մեջ վերածվել են անկենդան բառերի, որոնք իրար հետ կապված են գուտ քերականական կանոններով: Եվ վաղուց

արդեն մենք օտարվել ենք մեր արյունից ու հոգուց. մեր միտքը աշխատում է գուտանկենդան բառանշանների գործածությամբ, որպես արտաքին հաղորդակցման միջոց, այլ ոչ՝ ներքին հոգեւոր որակ. մեր միտքը աշխատում է թերի, անպտուղ, և մենք չենք կարող արարել և մենք չենք կարող խոսել Աստվածների հետ: Եվ Հայ Ազգը դադարեց արարել: Անկենդան բառերի քերականական համակարգի մեջ մտնում է նաև կենդանի Արարչագործությունը: Եվ Ազգի հոգեւոր եղեռնը շարունակվում է և դեռ կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ մենք վերականգնենք մեր զգացողության մեջ Հայոց Լեզուն որպես Ազգային Խորհուրդների Համակարգ և դրանով Ազգի սերունդների զգացողության մեջ հաստատենք այն որպես ազգային ներքին գենետիկական որակ: Ազգային խորհուրդները արտահայտվում են լեզվի արմատների միջոցով (բառարմատներ և հունչարմատներ): Հայոց Լեզվի ամեն մի արմատ ունի իր ամենաբազմազան երանգավորումները. և այդ ամենաբազմազան երանգավորումներով կազմում է ամենաբազմազան խորհուրդները: Եվ երբ վերականգնենք մեր մեջ Հայոց Լեզուն որպես Խորհուրդների Համակարգ, այն ժամանակ Հայոց Լեզուն կբացվի մեր առջև որպես Աստվածային իմաստության ավազան, որի մեջ մենք կգտնենք մեր էությունը, մեր ծագումը, մեր անցյալն ու ապագան: Այն ժամանակ արարչագործությունը կդառնա մեր կյանքի բովանդակությունը: Եվ մենք ինքներս կզգանք, որ Հայոց Լեզվով մուրալ չի լինի, աղերսել չի լինի, աղոթել չի լինի: Քանզի Հայոց Լեզուն Աստվածային Լեզու է, իսկ Աստվածներն ու Աստվածամարդիկ չեն աղերսում, չեն աղոթում և չեն մուրում:

Սլակ ԿՍԿՈՍՅԱՆ

◆ Ազգերի գորությունն ընտանիքների մեջ է: Չորավոր է այն ազգը, որն ունի գորավոր ընտանիքներ, սիրով, միություն, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ...

◆ Ժամանակն է, ... որ մենք մտնենք ամեն անկյուն և տգիտության բները ավերենք ամեն տեղ...

Բնությունը զարդարում է մեր երկիրը յուր լավագույն հարստությամբ, յուր քնքուշ գեղեցկություններով, և սակայն մարդկային անճաշակ տգիտությունը այլանդակում է նրան անխճորեն...

**ՍՈՐՈՍՍԱՆ**

◆ Մարդիկ սիրված լինելու համար են, իսկ իրերը՝ օգտագործվելու: Աշխարհում բառս է տիրում: Ցավոք ամեն ինչ ճիշտ հակառակն է դարձել...

**Դայայ-Լամա**

◆ Բոլոր ժամանակներում կեղծավորությունը մոդայիկ արատ է եղել, իսկ մարդկային արատները հիմա առաքինության տեղ են անցնում...

**Ռան Բառիստ Սոյիեր**

◆ Չկարողանալ ես չեմ կարող: Ի նչու, որովհետև անընդհատ մտածում եմ, իսկ քանի մտածում եմ, միշտ էլ կարող եմ:

**Սիեր ՄԿՐՏՅԱՆ**

◆ Մարդկանց միջև խնդիրները շատ ավելի քիչ կլինեին, եթե մարդիկ խոսեին իրար հետ, այլ ոչ թե իրար հետևից...

**ՎԱՅՆ ԹԵՔՅԱՆ**

**Տաղ հայերեն լեզվին**

Քեզ, Հայ Լեզո՛ւ, կը սիրեմ մըրգաստանի մը նըման...  
 Մեր Անցեալին թանձրախիտ ստուերներուն մեջ կարծես Մէյ մէկ պըտուղ քու բոլոր բառերդ ինձի կերեան...  
 Որոնց մէջէն կը քալեմ ու կը քաղեմ ու կը քաղեմ ես...:  
 Մրգաստանի մը նըման կը սիրեմ քեզ, Հայ Լեզո՛ւ...  
 Մեր հայրենի պալատէն, պարտեզներէն մընացող  
 Դալարագեղ դուն պուրա կ, որ դիմացար դարերու  
 Եւ կը մընաս միշտ առոյգ, հին աւիշով կենսայորդ...:  
 Ծառերուդ մեջ հովանուտ կերթամ խինդով մանսահման,  
 Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,  
 Չարմանալով թէ ի նչպէս դուն մընացիր երբ սաստիկ  
 Քամին քու շուրջըդ փըչեց եւ տապալեց ամէն բան...:  
 Մէյ մէկ պըտուղ գոյնըզգոյն բոլոր բառէ ըրդ ահա,  
 Հիւթէ դ բառերդ գոր որքա՛ն հասունցուցին արեւներ,  
 Բառէ ըրդ որքան այս պահուս շըրթանցըս վրայ եմ բռներ,  
 Բառերդ որ քիմքըս կօծեն եւ կսփոփեն և սիրտս հիմա...:

# Սպեղծագործում են մեր ընթերցողները

## Վլադիմիր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

### ՎԱՆԵՆՈՒՄ ԵՄ

Ես վախենում եմ,  
Որ չեմ հասցնի ամեն ինչ ասել,  
Որ չեմ հասցնի քեզանից լսել  
Բառերն այն հատիկ,  
Համբույրն այն գողտրիկ,  
Որին սպասել եմ գուցե ողջ կյանքում:  
Այս ի՞նչ թախիծ է նստել իմ հոգում  
Հանգիստ չի տալիս,  
Համ էլ աչքերս ինչո՞ւ է լցվում  
հորդ արցունքներով  
Երբ քեզ եմ հիշում,  
Այդ ի՞նչ ուժ է ինձ դեպի քեզ քաշում:

Ես վախենում եմ թե հանկարծ մի օր  
Նույնը կդառնան զույները բոլոր,  
Զի լինի կարմիր, չի լինի կանաչ,  
Կապույտ բիբերիդ գույնն էլ անճանաչ:  
Որ չեմ տարբերի վարդը կակաչից,  
Հոսքը՝ կարկաչից,  
Եվ շունչ հեքը, հոգու հառաչից:  
Ես վախենում եմ կորստի համար,  
Ո՛չ անգին քարի, այլ իմ սուրբ սիրո,  
Ես այն իմ հոգում պահում եմ հույզով:  
Պահում եմ թաքուն գիշերներն անքուն:  
Փայփայուն սիրով ու սրտի դողով,  
Եվ քուն եմ մտնում սիրո երկյուղով:

Ես վախենում եմ շանթ ու կայծակից,  
Որը շաչում է ձմեռվա կեսին,  
Այն խոսք ապտակից՝  
Որը ասվում է ուրախ հանդեսին:  
Ես վախենում եմ և շեշտված տառից,  
Անառվա սառից, ձմեռվա տոթից,  
Ծածկում եմ դեմքս նաև ամոթից:  
Ես վախենում եմ սիրող սառելուց,  
Բայց ավելի շատ ես վախենում եմ.  
Հրածեշտ բառից...

### ԻՆԷՆԱՍՓՈԾ

Կապ եմ դրել լեզվիս վրա,  
Եվ սրտիս էլ մի փական,  
Որ այդպես էլ մարդիկ չզգան  
Թե իմ հոգում ինչե՛ր կան:

Ի՞նչ մտքեր են արդյոք տանջում,  
Ի՞նչ հոգսեր, ու ինչ թախիծ,  
Արդյոք ի՞նչ են ես անըջում  
Զգացմունքով իմ անբիծ:

Կուրացել է աչքը սրտիս,  
Հոգիս խռով ու մթին,  
Ամպ ու զամպ է պատել մտքիս,  
Ես մոլորված վերստին:

Վիշտս խորունկ թաքցնելով,  
Մտքով լռիկ ու տրտում,  
Այն աղջկան ոսկե ծամով,  
Միշտ կպահեմ իմ սրտում:  
14.11.2011 թ.

### ՈՐԲ ՀՈՒՍԱԼԵՍԱՆ

Ելե՛ք հավքե՛ր, հովե՛ր ելեք,  
Դարդս տարեք աշխարհին,  
Ես լքված եմ, սերս լացե՛ք,  
Ինձնից գնաց իմ փերին:  
Սերս անսիրտ ու անհոգի,  
Ա՛խ, ինձ գերեց ու անցավ,

Նա ուրիշի գրկում անհոգ,  
Անցած սերս մոռացավ:

Յարս հոգին նրան տվեց,  
Բայց ինձ պահեց իր սրտում,  
Ու տանջվում է հոգիս անսեր,  
Սիրտս լալիս է տրտում:

Սիրտս հազար ցավեր ունի,  
Սակայն ցավն այս ուրիշ է,  
Սիրտս հազար էջեր ունի,  
Գրվածքները՝ մշուշ են...

Սիրտս նաև լեզու ունի,  
Թվատեցին անիրավ,  
Կաղկանձում է դառը ցավից,  
Տրոփում է անդադար:

Վարդ սիրեցի, փուշը խոցեց,  
Վարդաթերթերն վարդաբույր,  
Ինձ ցողունը վարդն ուրիշին,  
Փշից կառնեմ վարդ համբույր:

Սիրտս խոցված սիրտ է դարձել,  
Խոցը չար է, կպայթի,  
Նա դրված է վանդակի մեջ,  
Յարս տեսնես կցացի՞ ...

Ես լուռ կուլված ծով արցունքով,  
Դառը կուլված իմ բարձին,  
Հազար տարի թեկուզ անցնի,  
Զավն այս ինձնից չի՛ անցնի:  
08.2009 թ.

### ՎԱՆԽԱԶԳԱՅՈՒՄ

Թե համբույրիս հետքը չքվի  
Քո շուրթերից վարդաբույր,  
Սիրուս բարդի ծառը կքվի,  
Էլ ի՞նչ պատրանք ու համբույր:

Քո աչքերում թե չզգանեմ  
Ինձ ներս կանչող ոչ մի կայծ,  
Այդժամ նորեն կկուրանամ  
Վկա՛ երկինք ու Աստված:

Վառ կարոտից բաժակն հույսիս  
Թե որ լցվի, թափվի ցած,  
Հոգուս սիրո երկինքն ամպած  
Միշտ կմնա դառնացած:

Իմ մատների մուրք շոյանքից  
Թե դող չանցնի քո սրտով,  
Կհեռանամ ես քեզանից  
Դառնացած ու անվրդով:

### ԱՍՏՅՈ ՊՍԳԱՍԸ

Ես դեռ կգամ,  
Ինձ սպասե,  
Գոյությունս մի հակասե:  
Կգամ բարին գրկած ու լուռ,  
Ու կբանամ հազար փակ դուռ:  
Կառնեմ չարը՝ տալով բարին,  
Քանց արագիլ բարդ ու թառին:  
Եղիր, սակայն, միշտ հավատքով,  
Ես քո մեջ եմ  
Ու քո կողքին,  
Ականջ արա իմ աղոթքին  
Արի դարձի,  
Եշտարտության ուղուն փառքով  
Վերադարձիր:

Ես դեռ կգամ,  
Ինձ սպասե,  
Քո չարությունս մարդկանց երբեք  
մի վնասե:

Դու հավատա ու տուր հավատ,  
Եղիր գինի ոսկեզավաթ:  
Մարդուն նայիր մարդու աչքով,  
Եղիր խրատ լուկ քո վարքով:  
Բարի, ներող,  
Չարության դեմ միշտ համբերող:  
Միշտ սառնարյուն  
Ու միշտ հպարտ,  
Եվ քո կյանքում եղի՛ր անպարտ:

Ես դեռ կգամ,  
Ինձ սպասե,  
Լսիր սրտիդ, թե ինչ կասե:  
Սիրիր կյանքում, որ միշտ սիրվես,  
Տիրիր սիրով, որ չտրվես:  
Միշտ ընկածին հանիր ոտքի,  
Եվ նոր վերքեր մի մորմոքի:  
Գնահատիր լավն ու բարին,  
Ոչինչ չկա անհնարին:  
Միշտ ունեցիր հավատք ու սեր,  
Ու կընենես փառքով միշտ վեր,  
Բայց քո վարը մի՛ մոռացիր,  
Միայն բարին դու կամեցիր:

Ծունկի արի դառն Աստծո,  
Մարդը սիրի՛ր, ի սեր Աստծո:  
Աստված է միշտ արարի՛չը  
Ու քո հոգու սուրբ փրկիչը:

Նա քո մեջ է, թե որ զգաս,  
Աղաթում եմ, որ դարձի գաս:  
Ինձ սպասե, ես դեռ կգամ,  
Բայց գալու եմ վերջին անգամ,  
Որ քեզ սնեմ իմ հավատով,  
Աստված վե՛հ է մարդ անհատով:  
Քո Աստվածը հենց քո մեջ է,  
Կյանքը հավերժ էլնե՛ջ է:  
Խորհուրդս քեզ, ո՛վ բարեկամ,  
Համբարձվում եմ,  
Բայց դեռ կգամ:  
1995 թ.

### ՎԵՐՋԻՆ ԻՂԶՍ

Զե՛գ եմ կանչում ով աստվածնե՛ր,  
Եվ ձե՛զ ազգիս վիատվածներ,  
Ներկա եղեք իմ համերգին,  
Երգ ու պարին,  
Սա է միակ իղձ վերջին,  
Պետք է պարեն սարիս լանջին:  
Այնքան երկա՛ր պիտի պարեն,  
Տրված ազգիս որ տուն բերեն:  
Ու իմ պարով կրակ ու բոց,  
Հասնեմ մինչև Տապան Նոյի,  
Ազգն իմ հայոց  
Թող ինձ նայի:  
Պարեն այնպես,  
Որ սուրբ սարիս ստորոտը,  
Ազգ իմ ցրված,  
Երբեք չզգա քո կարոտը:  
Մեծ Մասիսը լինի ինձ բե՛մ,  
Այնպե՛ս պարեն  
Որ չորս կողմից ծափեր առնեն,  
Ու ես դառնամ աչքն իմ սարի,  
Անգամ թուրքն ինձ ծափահարի:  
Կազմակերպեմ շքեղ մի երթ,  
Պարենք հայոց պարը մեր «Բերդ»:  
Թափով, ուժգին,

# Մտեղծագործում են մեր ընթերցողները

## Էդուարդ ՇԱԳԻՆՅԱՆ

### ԵՍ ՀԱՅ ԵՄ

Սկիզբով հայի բախտ եմ անողոք,  
Սիրեն, չսիրեն աշխարհում ոչ ոք...

Ես, իբրև սկիզբ մարդ այս հանճարի  
Դարերը վկա, բոլորի համար  
եղել եմ բարի...

Ինչքան ազգեր են մոռացվել անհետ,  
Բայց ես ապրել եմ ու կապրեմ հավետ...

Ու կապրեմ հավետ, որպես Մունետիկ,  
Քարից հաց քամող ու արդար քրտինք...  
Աշխարհի առաջ բացել եմ հոգիս  
և ամեն մի իղծ,  
Ես կամ ամեն տեղ, ամենուր անպիղծ...

Եվ այս դարերում եղել եմ միշտ պինդ,  
Ես չեմ վաճառել տիրություն ու խինդ...

Եվ հենց այդպես էլ սուրբ է  
ինձ համար իմ Հայրենիքը,  
Եվ ինչ էլ որ անեմ,  
Աստծո կամքով է իմ անելիքը...

\*\*\*

Դառն ու անուշ է աշխարհն այս, ցավոք,  
Դու հաշտվիր քեզ հետ, վաղն արդեն իրոք  
Ուշ է լինելու...

Ճանապարհը, տեն, նա կանգառ չունի,  
Ինչ էլ որ անես, երեկվա օրը  
այսօրվա համար  
Հուշ է լինելու...

Ինչքան էլ ջանաս, ինչպես էլ փնջես,  
Վարդի հետ միշտ էլ  
Փուշ է լինելու...

Դու երգդ երգիր, թե վերքդ խորն է,  
Երգդ անամոք  
Վիշտ է լինելու...

Քանզի այս կյանքում՝ անսկիզբ, անվերջ,  
Ծնունդն ու մահը  
Միշտ են լինելու...

\*\*\*

Մանկությունս որպես մի հուշ,  
Օրեր անհոգ, անուշ-անուշ,  
Քարափների ծերպին թառած՝  
Արծվի թևին թռավ, գնաց:

Կտրեց, անցավ ցամաք ու ծով  
Արար աշխարհ շրջեց մի պահ

Սեղան մստեց արևի տակ, ծառի հովին,  
Եվ վայելեց երկիր ու գահ...

Բայց, տես, ահա եկել է նա հիմա կրկին,  
Լաց է լինում աչքերիս դեմ և սրտիս մեջ,  
Այս աշխարհում ցավեր տեսած  
խառն ու խրթին,  
Եվ հոգու մեջ պահած հազար  
կարոտ անշեջ...

Ի՞նչ ամեն ես, մանկությունս կրօքիս լալիս,  
Կարիքս առած, մստած անճար  
միտք եմ անում,  
Թե այս կյանքում մարդուն ինչքան  
ցավ են տալիս,  
Մարդն ինչպե՞ս է ամեն  
ցավին էլ դիմանում...

Մանկությունս որպես մի հուշ,  
Օրեր անհոգ, անուշ-անուշ,  
Քարափների ծեպին թառած՝  
Արծվի թևին թռավ, գնաց...

\*\*\*

Իմ ծաղիկները մնացին հեռվում,  
Հազար սար ու ձոր ու լեռներ անանց...  
Ուր կարոտներս թռչում են անհուն՝  
Իմ աղոթքներիս թևերին թառած...

Եվ ամեն անգամ աշխարհից թաքուն,  
Գալիս եմ հատ-հատ, մստում իմ դիմաց...  
Խորհում եմք երկար, գիշերներ անքուն,  
Բայց չի հագեցնում սիրտս կարոտած...

Տեր իմ, այս կյանքում ինչքան էլ ապրենք,  
Ծնունդն ու մահը միշտ է լինելու...  
Աշխարհից երբ էլ հեռանա մարդը,  
Սրտում անկատար իղծ է լինելու...

\*\*\*

Դու մի ամբողջ կյանք՝  
Սրտիս մեջ պահած  
Իմ ուրախությունն,  
Իմ կարոտ, իմ վիշտ...

Դու՛ ամբողջ կյանքում  
Սև, սաթ աչքերով, երկար մազերով  
Եվ իմ խռովկան  
Ժիր աղջիկն ես միշտ...

Ա՛խ, ո՛ւր եր՛ կրկին  
Աչքերիդ նայեմ,  
Երազներիս պես  
Քեզ գիրկս առնեմ...

Կարոտիս միջով  
Մենք անեանանք,

Աշխարհից թաքուն  
Մի պահ հեռանանք...

Որ էլ չտեսնենք  
Կարոտներ ու վիշտ...  
Երբ կրկին աշխարհ  
Մենք վերադառնանք...

\*\*\*

Գնամ, հեռավոր ճամփեքից հոգնած  
Մանուկ օրերիս դռները բացեմ,  
